«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Սովորողների արժեքային համակարգի զարգացումը դասավանդման ընթացքում**

Հետազոտող ուսուցիչ՝ Քամայյան Մարինե
անուն, ազգանուն

Լեռնագոգի Օնիկ Փակումեանի անվան միջնակարգ դպրոց
դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Անտոնյան Ա.
անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան——————————————————————————— 3

2. Գրական ակնարկ ——————————————————————————— 6

3. Սովորողների արժեքային համակարգի զարգացումը դասավանդման ընթացքում— 9

4. Ամփոփում ——————————————————————————— 16

5. Գրականության ցանկ ——————————————————————— 18

ՆԱԽԱԲԱՆ

Կրթության ամբողջ նպատակը հայելիները

պատուհաններ դարձնելն է:

Սիդնեյ Ջ. Հարիս

Այս փոփոխությունների ժամանակաշրջանում, երբ ժամանակակից աշխարհը լեփ լեցուն է բազմաթիվ դրական և բացասական դրսևորումներով, երբ շարունակում են ավելանալ մանկատներն ու ծերանոցները, երբ փողոցում հանդիպում ենք մուրացկան և անօթևան երեխաների, յուրաքանչյուրիս համար հրամայական խնդիր է դարձել անհատին ոչ միայն գիտելիքներով զինել, այլ նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակության հուզող խնդիրներից մեկն է:

Կրտսեր դպրոցի հիմնահարցերից կարևորագույնը բարոյական ժառանգությունը նոր սերնդին փոխանցելն է և արժեհամակարգի հիմքում նոր արժեքներ սերմանելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտությունը հաստատելը: Ուստի երեխաների մեջ շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը: Դասավանդման ընթացքում ուշադրություն դարձնելով կարևորագույն արժեքների դիտարկմանը, մեր խնդիրն է օգնել աշակերտներին իմաստավորելու այդ արժեքները, կենսափորձի և հարցադրումների միջոցով որոշել ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել:

Ուստի իմ առջև դրեցի մի պարտականություն, նպատակ, որպեսզի գործունեությանս ընթացքում կարողանամ ճիշտ ուղղորդել սաներիս՝ ընկալելու մարդու բարոյական, գեղագիտական, ընտանեկան, հոգևոր իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբը, քանի որ այն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Աշխարհաքաղաքական այս վայրիվերումների ճանապարհին կարևոր դեր ունի ուսուցիչը, արժեհամակարգ զարգացնելու և հումանիստ, հայրենասեր, ընտանիքը կարևորող սերունդ դաստիարակելու գործում: Երեխաները դպրոց են գալիս տարբեր ընտանիքներից և նրանց համար ընդունված արժեհամակարգային չափանիշը պայմանավորված է իրենց միջավայրով: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցումը: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (խաղ, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ, հարց ու պատասխան) ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Յուրաքանչյուր հայի համար արժեհամակարգի ամենակարևոր բաղադրիչներից մեկը ընտանիքն է: Ընտանիքը սիրո, հարգանքի, հանդուրժողականության աղբյուր է, որի վրա ձևավորվում է քաղաքակիրթ հասարակությունը:

Թեման՝

Սովորողների արժեքային համակարգի զարգացումը դասավանդման ընթացքում:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝

Դասավանդման ընթացքում, սովորողների մոտ արժեհամակարգի զարգացման ուսումնասիրություն:

Խնդիրը՝ ուսումնասիրել կրտսեր դպրոցականի արժեքային համակարգի զարգացման ուղիները: Դիտարկել և հիմնավորել ընտանիքը որպես արժեհամակարգի կարևոր գործոն:

Օբյեկտը – դասարան

Միջոցը – «Հարց ու պատասխանի» մեթոդը որպես կրտսեր դպրոցականի արժեքային կողմնորոշումների զարգացման միջոց։

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք "արժեքներ" հասկացությունը։ Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում։

Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել։ Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը։ Առանց արժեքների կյանքը դատարկ է։ Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման։ Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ։ Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի։ Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում։ Նորմերը տարբեր են քաղաքում և գյուղում։ Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի։ Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր։ Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ։ Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում։ Հիմա անդրադառնանք բարոյականությանը։ Արժեհամակարգը ծառի արմատներն են, բունը՝ էթիկական նորմերը, իսկ սաղարտը բարոյական դրսևորումներն են։

Մոտեցումների և սահմանումների բազմատեսակության մեջ "արժեք" հասկացությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի։

Առաջին խմբում ներառված են հասկացություններ, որոնց հեղինակներն արժենքերը դիտում են որպես կարծիք, պատկերացում կամ համոզմունք։

Երկրորդ խմբում արժեքը սահմանում են, որպես սոցիալական դիրքորոշումների և հետաքրքրությունների տարատեսակ երևույթ։

Դ. Ուձնաձեն գտնում էր, որ կրտսեր դպրոցականների մոտ արժեքային համակարգը ձևավորվում է սոցիալական փորձի միջոցով։

Գ. Դիլիգենսկին և Բ. Դոդոնովը արժևորում էին պահանջմունքներն ու շարժառիթները։ Նրանք գտնում էին, որ դպրոցականների մոտ արժեքային համակարգի ձևավորումը անհնար է պատկերացնել առանց մարդկանց և հասարակության հետ շփումի։

Ժ. Պիաժեն դպրոցականների արժեքային կողմնորոշումների զարգացումը կապում էր ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ։

Եթե արժեհամակարգի զարգացման առաջին փուլում աշակերտը բարոյական նորմերը դտարկում է որպես հաստատված և անփոփոխ, ապա երկրորդ փուլում առաջ է գալիս բարոյական գնահատականների հարաբերակցությունը։

Ն. Ժուրավլյովան դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման գործում կարևորում էր տարածաշրջանային պայմանների դերը։

Նա պնդում էր, որ դպրոցականի արժեքային համակարգը հիմնված է այն հասարակության գաղափարախոսության վրա, որին նա պատկանում է։

Լիոնտևը պնդում է, որ դպրոցականի արժեքային համակարգը զարգանալով, կարող է իր մեջ ներգրավել «վարքի նմանակման» ընդունակությունը։ Դպրոցականը

ներգրավվելով փոքր և մեծ խմբերի մեջ, քննարկելով դասագրքի հերոսների կերպարները, հաճախ նմանակելով նրանց, ձևավորում է նոր աժեհամակարգ։

Գ.Մ. Անդրեենան, որպես արժեքների անհատական համակարգի ձևավորման միջավայրային գործոն, առանձնացնում է ընտանիքը։

Այսպիսով՝ ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել 5 խմբով՝

1. Պատկերացում

2. Դիրքորոշում

3. Պահանջմունք

4. Իմաստ

5. հասարակական կենսագործունեության արդյունք։

Յուրաքանչյուր դասին, իմ պարտքն եմ համարում սաներիս մեջ ձևավորել և զարգացնել արժեքային կողմնորոշումներ։ Որովհետև, որոշակի արժեքային հենքի վրա կառուցած գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային ընդհանուր սկզբունքներից։

Քանի որ, կրթության առանցքը արժեհամակարգն է, իսկ բարոյական արժեքների բացակայությունը արժեհամակարգի գլխավոր խնդիրներից մեկը, ուստի դասերի ընթացքում մեծ կարևորություն եմ տալիս բարոյական արժեքների զարգացմանը։

Մի հայտնի խոսքում ասվում է՝ սեփական ընտանիքի խաղաղ ու երջանիկ կյանք ապահովելը կախված է այն արժեհամակարգից, որը տարիների ընթացքում ձևավորում է դպրոցն ու հասարակությունը։

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսուցման իսկական առարկան մարդուն նախապատրաստելն է

մարդ լինելու համար:

ՆԻԿՈԼԱՅ ՊԻՐՈԳՈՎ

Արժանապատվության, արդարամտության, աշխատասիրության, հույսի, հավատի, սիրո, ընտանիքի մասին ճիշտ հարցադրումները յուրաքանչյուր դասի ընթացքում երեխայի մոտ զարգացնում են արժեքների գիտակցում, համակարգու և ձևավորում են նոր արժեհամակարգեր, դաստիարակում արժանապատիվ, ազգասեր, ծնող և ընտանիք սիրող, բարոյական բարձր հատկանիշներով օժտված քաղաքացի:

Բարոյական վարքագծի հիմքը դրվում է կրտսեր դպրոցականների մոտ, այս տարիքից են սկսում յուրացնել բարոյական նորմերն ու կանոնները:

Ընտանիքի և ծնողական սիրո մասին դասերը պետք է յուրաքանչյուր աշակերտի համար անձնային նշանակություն ստանա, որպեսզի երեխան հասկանա, որ ընտանիքը սկսվում է հենց իրենից, ծնողի նկատմամբ իր վերաբերմունքից, չէ՞ որ բոլոր ժամանակներում էլ պետության զարգացումը դատել են ըստ ընտանիքի զարգացման աստիճանի և ընտանիքի հանդեպ պետության վերաբերմունքի:

Երկրորդ դասարանում, որտեղ սովորում են 19 աշակերտներ տարբեր մեթոդներ կիրառելով, հաճախ եմ անդրադառնում արժեհամակարգի կարևորությանն ու զարգացմանը:

Յուրաքանչյուր դաս իր մեջ ներառում է արժեհամակարգի տարբեր դրսևորումներ, ուստի իմ պարտքն եմ համարում գտնել այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնց միջոցով կարողանամ վեր հանել թեմայում ընդգծված բարոյական նորմը, այն քննարկել և զարգացնել այնպես, որ երեխայի մեջ դառնա հիմնարար արժեք:

Մեփական փորձառության ներկայացում

Երբեմն աշակերտները միջավայրի ազդեցությամբ կորցնում են որոշակի արժեքներ, ժամանակակից երևալու համար՝ տառապում են օտարամոլությամբ, խոսում են աղավաղված հայերենով, հաճախում են անհասկանալի խմբակներ։

Դասավանդման ընթացքում արժեքների քննարկման շնորհիվ, աշակերտը իմաստավորում, գնահատում և բարոյական արժեքները, բարի ու չար, արդար ու անիրավ, պարկեշտ ու արգահատելի և գեղարվեստական արժեքները՝ գեղեցիկը, ողբերգականը, զավեշտալին։ Որպեսզի յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր երեխայի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի այնպիսի մթնոլորտ, որտեղ հիմք կդրվի աշակերտի անձնական բարոյական որակների ձևավորմանը։ Սովորողների մեջ բարոյական արժեքներ սերմանելու և պահպանելու համար մշակվել են որոշ մեթոդներ և ռազմավարություններ։

1. Դրամատիզացում
2. Պատմություն
3. Անձնական օրինակներ
4. Դերախաղեր
5. Խմբային աշխատանքներ
6. Հարցադրումներ

II դասարանում դասերը արդյունավետ և նպատակային դարձնելու համար հաճախ եմ օգտագործում հարց ու պատասխանի մեթոդը։

Հարց ու պատասխանի միջոցով ամբողջությամբ վեր է հանվում ամենակարևոր մտքերը, աշակերտներին հնարավորություն է ընձեռվում հիշելու տեքստի բովանդակությունը։

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

«Ծեր պապն ու թոռը» դասը վարելիս իմ առջև խնդիր էի դրել աշակերտների հետ քննարկել **ընտանիքը** որպես հիմնարար արժեք, կարևորել նրա նշանակությունը և զարգացնել այն սիրո ու ջերմության մեջ պահելու կարողունակությունը:

Այն քննարկելու և զարգացնելու համար գործիք էի ընտրել «Հարց ու պատասխան»- մեթոդը:

Նախօրոք կազմել էի հարցերի երեք խումբ.

Ա. հարցեր՝ մինչև դասանյութը կարդալը (գրել գրատախտակին)

Բ. Հարցեր՝ դասը վարելու ընթացքում

Գ. Հարցեր՝ երկրորդ դասաժամից հետո

Դասը վարելիս հաշվի էի առել երկու կանոր սկզբունք՝

Ա. ստեղծել հոգեբանական բարենպաստ մթնոլորտ

Բ. դրսևորել ոչ գնահատողական վերաբերմունք

Դասը սկսելուց առաջ հանձնարարել էի գրել շարադրություն «Ինչպես եմ վերաբերվում ծնողներիս» թեմայով:

Իրենց շարադրություններում նրանք գրել էին, որ ծնողներին պետք է օգնել, հիվանդ ժամանակ խնամել, երբ ծարավ են՝ ջուր տալ, երբ քնած են՝ չաղմկել և այլն:

Աշխատանքն ավարտելոից հետո շարադրությունները հավաքել էի:

Այնուհետև նրանց հանձնարարել էի լուռ կարդալ «Ծեր պապն ու թոռը» դասի առաջին հատվածը և պատասխանել գրատախտակին գրված առաջին հարցին՝ ինչու հարսը որոշեց ճաշը պապիկին տալ փայտե տաշտակով: Նրանք պատասխանում էին, որովհետև պապը կավե ամանը ջարդել էր:

Երկրորդ հարցին, թե ո՞ր օրվանից հետո մարդ ու կին սկսեցին խնամել պապիկին, երեխաները պատասխանում էին՝ երբ իրենց տղան սկսել էր իր ծնողների համար տաշտակ պատրաստել։

Երկրորդ ընթերցման ժամանակ հանձնարարել էի դասը կարդալ բարձրաձայն և ամբողջական հատվածներով՝ «Զրույց հեղինակի հետ» հնարի կիրառմամբ։ Տեքստի բովանդակության շուրջ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով դասը վարում էի նախօրոք կազմած հարցերի միջոցով։ Երեխաները հարցին տալիս էին անկեղծ, շիտակ պատասխաններ, երբեմն անում էին կշռադատված դատողություններ, երբեմն էլ զգացմունքային։

Նախօրոք պատրաստել էի հետևյա լհարցերը.

1. Ինչպիսի՞ն էր պապիկը (թույլ էր, լավ չէր տեսնում, ձեռքերը դողում էին)։
2. Ճի՞շտ վարվեց հարսը, որ զայրացավ պապիկի վրա (ոչ, պապիկը ծեր էր, մեղք էր, հիվանդ էր, իր ամուսնու հայրն էր, իր տան անդամն էր)
3. Ծերունին ինչու՞ միայն հառաչեց ու ոչինչ չասաց (որովհետև ինքը սիրում էր իր երեխաներին)։
4. Ի՞նչ բնավորություն ուներ պապը (հանդուրժող էր, խեղճ էր, կռվարար չէր)
5. Ի՞նչ բնավորություն ունեին ծնողները (զիջողջ չէին, հարգող չէին, դաժան էին)
6. Ինչու՞ տղան սկսեց փայտե տաշտակ շինել ծնողների համար (որ երբ ծերանան, օգտագործելուց չկոտրվի)
7. Ինչու՞ լաց եղան ծնողները (ամաչեցին, փոշմանեցին, իրենց սխալը հասկացան)
8. Ձեզ դուր եկա՞վ այս ընտանիքը (ոչ)։

9. Ի՞նչ եք կարծում պապիկի համար հարմարավե՞տ էր ապրել այս ընտանիքում (այո, որովհետև իր ընտանիքն էր, ոչ որովհետև իր հետ լավ չէին վարվում)։

10. Ի՞նչ կարելի է անել, որ պապիկը իրեն լավ զգա (խնամել, զրուցել, խաղալ իր հետ, զբոսնել)։

11. Իսկ եթե դուք լինեիք պապիկի տեղը ի՞նչ կանեիք (կզայրանայի, կասեի, որ վատ եք վարվում ինձ հետ)։

12. Իսկ եթե լինեիք պապիկի որդու փոխարե՞ն. (երբեք այդպես չէի վարվի, կխնամեի, իմ ձեռքերով կկերակրեի)։

13. Եթե դուք լինեիք հարսի փոխարեն կամաչեի՞ք ձեր վերաբերմունքից (այո, ես ներողություն կխնդրեի, կխնամեի)։

14. Իսկ եթե լինեիք թոռնիկի փոխարեն, ի՞նչ խորհուրդ կտայիք ծնողներին (պապը մեր տան մեծն է՝ կարգեք, եթե որևէ բան ձեր սրտով չի, ներեք նրան, չէ՞ որ ինքը մեծ է)։

15. Երբ պապին մենակ նստած անկյունում իր ճաշն էր ուտում, ի՞նչ զգացիք (իմ լացը եկավ, ես զգացի, որ ծերությունը շատ վատ բան է, ես զգացի, որ պապիկին չեմ նկատում, ես կուզեի գրկել պապիկին, ես ցուրտ զգացի, պապիկի նկատմամբ, **ջերմ** չէին)

16. Ինչի՞ց զարմացաք «որ ծնողի հետ այդպես չեն վարվում, չէ՞ որ իրենք էլ են մեծանալու, ես զարմացա, որ բոլորն էին անտարբեր, ընտանիքում չի կարելի միմյանց նկատմամբ **անտարբեր** լինել»

17. Ե՞րբ զայրացաք «երբ հարսը զայրացավ պապիկի վրա, իսկ թոռնիկը լռեց, ոչ թե պետք է զայրանայի՞ն պապիկի վրա, այլ պետք է ապրումակցերին, օգնեին»

18. Ի վերջո ի՞նչ է ընտանիքը

●ընտանիքը ամենատաք անկյունն է

●ընտանիքը ամենաապահով վայրն է

●ընտանիքը ծնողներն են, պապիկը, տատիկը, քույրիկը, եղբայրը

●ընտանիք նշանակում է ընդ տանիք, երբ բոլորը նույն տանիքի տակ են ապրում

19. Կարո՞ղ եք շարունակել միտքս

●Ծնողին միշտ պետք է սիրել, թեկուզ ծեր հասակում

●Ծնողին պետք է միշտ ջերմ խոսքեր ասել

●Ծնողի հետ պետք չէ անտարբեր լինել

●Ծնողին պետք է ապրումակցել

20. Ի՞նչ մտածեցիք այսքանից հետո

●Ես մտածեցի, որ ընտանիքում, եթե չեն նկատում մեկին, դա վատ բան է

●Ես մտածեցի, որ ամենամեծ հարստությունը ընտանիքն է

21. Ի վերջո ի՞նչ է յուրաքանչյուրիդ համար ընտանիքը

●ընտանիքը սեր է

●ընտանիքը տոն է

●ընտանիքը պատիվ է

●ընտանիքը պաշտպանություն է

22. Իսկ ո՞վ է ծնողը ձեր համար

●Ծնողը իմ ընկերն է

●Ծնողը հայրս ու մայրս են

●Ծնողը այն մարդն է առանց որի ես չեմ ապրի

●Ծնողը իմ տաքուկ անկյունն է

Աշակերտներին տրված յուրաքանչյուր հարց ազատ անկաշխանդ վերլուծում էինք, քննարկում, անում հետևություններ՝

- Ընտանիքում պիտի հարգեն միմյանց
- Ընտանիքում պիտի լսեն միմյանց
- Ընտանիքում պիտի օգնեն միմյանց
- Ընտանիքում պիտի զիջեն միմյանց
- Ընտանիքում պիտի սիրեն միմյանց
- Ընտանիքում պիտի վստահեն միմյանց
- Ընտանիքում պիտի ապրումակցեն միմյանց

Դասի ավարտին հանձնարարել էի գրել նույն «Ինչպես եմ վերաբերվում ծնողներիս» շարադրությունը՝ ստուգելու համար ի՞նչ էր փոխվել իրենց արժեհամակարգում։

Աշակերտներից շատերի աշխատանքներում ավելացել էին խնամելու եմ, օգնելու եմ, սիրելու եմ, լսելու եմ, հանդուրժելու եմ, ամեն օր ջերմ խոսքեր եմ ասելու, հարգելու եմ, ներողություն եմ խնդրելու, ապրումակցելու եմ բայերը։

Աշակերտները և հարց ու պատասխանի ընթացքում և իրենց շարադրություններում արտահայտում էին առողջ և կարևոր դատողություններ ընտանիքի, ծնողական սիրո կարևորության մասին։ Ծնողների նկատմամբ սերը, հոգատար վերաբերմունքը այլև կարևոր դրսևորումներն են, որոնք գլխավոր տեղ են զբաղեցնում արժեքային համակարգում։

Մի հայտնի խոսքում ասվում է՝ «Սեփական ընտանիքի խաղաղ ու երջանիկ կյանք ապահովելը հաճախ նույնքան դժվար է լինում, որքան մի ողջ նահանգ կառավարելը»։

Ամուր և կայացած ընտանիքում յուրաքանչյուր ոք իրեն պաշտպանված է զգում, դառնում ավելի ուժեղ և վստահ։

Արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնական գաղափարը ոչ թե ուսման և դաստիարակության գործընթացում աշակերտներին բարոյական իդեալներ պարտադրելն է, այլ պայմաններ ստեղծելը, որպեսզի նա առաջնորդվի բարձր արժեքներով, դրանք անցկացնի իր միջով և գործի գիտելիքներին և համոզմունքներին համապատասխան։

Այս թեմայի ամփոփումից հետո ես հասկացա, որ այս արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների հորձանուտում ուսուցիչը յուրաքանչյուր դասավանդման ընթացքում պետք է կարևորի արժեքային համակարգի ձևավորումը, կրտսեր դպրոցականների բարոյական արժեքների կողմնորոշելու աշխատանքը կատարվի գիտելիքների, հմտությունների, կարողությունների հիման վրա։

Կրտսեր դպրոցականների մոտ արժեհամակարգի զարգացման աշխատանքներ պետք է տարվեն անընդհատ և՛ դասապրոցեսում, և՛ արտադասարանական գործունեության ընթացքում։

Ուսուցչի խնդիրն է աջակցել աշակերտի արժեհամակարգի ձևավորմանը և զարգացմանը։

Դասի ընթացքում, որքան շատ են արժեհամակարգի ձևավորման միտված աշխատանքները, այնքան զարգանում է արժեհամակարգը, աշակերտը դառնում է կիրթ, առաքինի և հետագայում մենք ունենում ենք քրիստոնեական արժեհամակարգով օժտված քաղաքացիներ։

Այսպիսով, իմ դասավանդման ընթացքում, կրտսեր դպրոցականների շրջանում հատուկ կարևորություն եմ տալիս արժեքային համակարգի զարգացմանը:

Քանի որ, նման մոտեցումը նպաստում է աշակերտների արժեքային ճիշտ կողմնորոշումների ձևավորմանը, թույլ է տալիս ընդլայնել պատկերացումների շրջանակը արժեհամակարգային գործունեության ընթացքում:

Ամեն դեպքում, կարևոր կետը, որը պետք է հիշել, այն է, որ ցանկացած տեսակի գործունեությանը պետք է հետևի որոշակի փորձառության արտացոլումը:

Կրթական տիեզերական դաշտի մեջ մենք պետք է կարողանանք մեր տեսակետը հաստատել պահպանելով արժեհամակարգի կանորագույն դրույթները:

Տունը չի կարող ընտանիք համարվել, քանի դեռ նրանում սերունդ ու կրակ չկա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, վերլուծելով արժեքային կողմնորոշումների խնդրի և կրտսեր աշակերտների շրջանում արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունները, կարող ենք եզրակացնել, որ արժեքային կողմնորոշումների ձևավորումը առավել բարենպաստ է լինում տարրական դպրոցական տարիքում և հաշվի առնելով ժամանակակից կրթական առանձնահատկությունները. գործընթացի, ուսուցման գործընթացի և կրթության նորարարական ծրագրերի և նոր մոտեցումների կիրառման ոչ միայն տարրական, այլ բոլոր ժամանակակից դպրոցներում կարելի է խոսել այս ուղղությամբ հատուկ նպատակային աշխատանքի անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով կազմակերպչական և մանկավարժական որոշակի պայմանները։

Այս աշխատանքի նպատակն էր դիտարկել մանկավարժական պայմանները դասղեկի ուսումնական աշխատանքում՝ նպաստելով աշակերտների արժեքային կողմնորոշումների ձևավորմանը։

Այսօր կրթության նպատակը մարդուն իր ներսում կարգուկանոնով դարձնելն է, ինչպես նաև ընտանիքի, հասարակության, ազգի և աշխարհի կանոնավոր միավորը: Բայց այսօրվա արագընթաց աշխարհում, որտեղ հասարակության աննախադեպ փոփոխություններ են տեղի ունենում, մենք կլանել ենք դարաշրջանի առանձնահատկությունները և մեծ չափով շեղվել ենք ճիշտ ուղուց: Խոր արմատացած արժեքները, գաղափարները, վերաբերմունքը, հույսերն ու ձգտումները բոլորն էլ ենթարկվել են ծովային փոփոխության: Երեխաները նույնպես անմասն չեն մնացել: Ներկա սցենարում, երբ մարդու բարոյականությունը նվազում է, երիտասարդ մտքերը դաստիարակելը և նրանց մեջ արժեքներ սերմանելը ծնողների, ինչպես նաև ուսուցիչների պարտականությունն է:

Դպրոցական առարկաների բովանդակության մեջ արժեքների մասին գիտելիքների պարտադիր ընդգրկումը թույլ է տալիս ընդլայնել երեխայի պատկերացումների շրջանակը անձնական, սոցիալական, ազգային և համամարդկային

արժեքների մասին, արժեհամակարգային գործունեության կազմակերպում, որի ընթացքում ձևավորվում են կրտսեր դպրոցականների բարոյական գիտելիքներն ու բարոյական հարաբերությունները, մանկավարժական աջակցությունը՝ որպես արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի հաջողության պայմաններից մեկը։

Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը պետք է լինի նպատակային և կազմակերպված, երկար և շարունակական։

Բոլոր երեխաների զարգացմանն ուղղված կրթության գործընթացը պետք է նախագծված լինի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուր երեխայի օպտիմալ զարգացումը՝ ելնելով նրա անհատականությունից։ Երեխաներին պետք է սովորեցնել ոչ միայն ճիշտ արտասանել վերացական բարոյական սկզբունքները և ճանաչել մարդկային բարձրագույն արժեքները, այլ նաև ապահովել, որ համընդհանուր բարոյականության հիմքերը դառնան առօրյա կյանքի իրավիճակներում նրանց վարքագծի կարգավորիչը։ Մեր կարծիքով, արժեքային կողմնորոշումների ձևավորման մեխանիզմների իմացությունը, դիտարկումը և վերլուծությունը և կրտսեր աշակերտների կողմից արժեքների յուրացման կազմակերպման մեթոդների նպատակային օգտագործումը կօգնեն լուծել այս խնդիրը ժամանակակից տարրական դպրոցում։

Ուսուցիչը ուղղակի ազդեցություն ունի արժեքային կողմնորոշումների ձեռքբերման վրա։ Համեմատած արտաքին աշխարհի հետ, որտեղ երեխաները չափազանց շատ բան ունեն, որոնցից կարող են շեղվել, ուսուցիչները կարող են առանցքային դեր խաղալ իրենց աշակերտների հետաքրքրությունների և կարողությունների բացահայտման գործում, ինչպես նաև ոգեշնչել և դրդել երիտասարդ մտքերին դեպի ճիշտ ուղղություն։

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում ունենալով շարունակական բնույթ։

Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգագործել աշխարհը փոխելու համար: ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. S. Ռոչկին «The nature of Human Values. 1973г.»
2. Унадзе Д. Н. «Психология установка .слв. 2001г.»
3. Ведер М. Основние социологические понятия 1990г.
4. Журавлева Н.А. Психология социальних изменений.
5. Андреева БГ. Психология социального познания.
6. https://www.pupilstutor.com/2021/12/methods-of-teaching-value-education.html
7. http://archive.indianexpress.com/news/teachers-must-integrate-moral-values-with-the-curriculum/533758/
8. https://mediamax.am/am/column/12925/
9. https://www.evkova.org/referat-na-temu-formirovanie-bazovyih-natsionalnyih-tsennostej-mladshih-shkolnikov
10. https://works.doklad.ru/view/fRy-dUHq8io/all.html
11. https://artsakhlib.am/wp-content/uploads/2018/10/Bagdasaryan-Ellada-Azgayin-krtutyun.pdf